ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ՎԱՀԵԻ ՄԱՍԻՆ

Լ. Փ. ՇԱՀԻՆՅԱՆ

Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» առաջին գրքի նախավերջին գլխում (գլ. ԼԱ) Հայկյան հարստության վերջին գահակալ Վահեի մասին գրում է. «Սա ընդվզեալ՝ մեռանի յԱլեքսանդրէ Մակեդոնացւոյ»:

Խորենացու խիստ հակիրճ այս տեղեկությունը ունի պատմական մեծ արժեք և արժանի է լուրջ ուշադրության։ Բանն այն է, որ տվյալ ժամանակաշրջանի դեպքերի, ինչպես նաև Ալեքսանդր Մակեդոնացու դեմ հայերի մղած պայքարի մասին մի փոքր ավելի հանգամանորեն տեղեկություններ կան նաև օտարաբան աղբյուրներում, որոնք ոչ միայն չեն հակասում Խորենացուն, այլ, ընդհակառակը, լրացնում են նրա հաղորդածի թերին և լրացվում նրանով։

Այսպես, մ. թ. I դարի հռոմեացի նշանավոր պատմիչ Կվինտոս Կուրտիոս Ռուփոսը, նկարագրելով Դարեհ III-ի զորաբանակի կազմը Գավգամելայի ճակատամարտում, գրում է. «Պարսիկները հարյուր հազար էին, որից երեսուն հազարը հեծելազոր, մեդացիները՝ տաս հազար հեծելազոր և հիսուն հազար հետևակ։ Բարկանցիները (կամ պարիկանացիներ—Լ. Շ.) ունեին երկու հազար հեծելազոր..., որին հետևում էր տասհազարանոց հետևակը...։ Հայերն ունեին քառասուն հազար հետևակ և յոթ հազար հեծելազոր»: Այնուհետև հիշատակված են ուրիշ ժողովուրդների զորաբանակները, որոնց համեմատությամբ հայկական զորաբանակը քանակապես գրավում է երրորդ տեղը՝ զիջելով միայն պարսկական և մեդական բանակներին[1]։

Կուրտիոս Ռուփոսի մեկ այլ տեղեկությամբ, Գավգամելայի ճակատամարտում հայկական գնդերը գտնվել են պարսից զորաբանակի աջ և ձախ թևերում՝ ձախ թևում Փոքր Հայքի, իսկ աջ թևում՝ Մեծ Հայքի զորագնդերը ուրիշ ժողովուրդների զորքերի հետ միասին։ Ի դեպ, Ռուփոսի այս տեղեկությունից հետևում է նաև, որ Մեծ Հայքի հայերը կանգնած են եղել աջ թևի առաջին գծում, քանի որ հիշվում են նախ նրանք, ապա մյուսները (կադուսներ, կապադովկացիներ, սիրիացիներ և մեդացիք)[2]։

Գավգամելայի ճակատամարտում հայերի մասնակցության փաստին անդրադարձել է նաև մ. թ. I—II դարերի հույն հայտնի պատմագիր, փիլիսոփա և քաղաքական գործիչ Արրիանոս Փլավիոս Նիկոմեդացին։ Ավելին, Արրիանոսը նշել է ոչ միայն այս փաստը, այլև որոշակիորեն հայտնել, որ

---

[1] Curtius Rufus, Historiae Alexandri Magni, *գիրք* III, *գլ.* 2, § 6; *Տե՛ս նաև* Квинт Курций Руф. История Александра Македонского, М., 1963, *էջ 22—23։ Լ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա., Երևան, 1944, էջ 91։*

[2] Curtius Rufus, *գիրք IV, գլ. 12, § 12։*

պարսից զորաբանակի աջ թևում գտնվող հայկական և կապադովկական հեծելազորը կանգնած էր ճակատամարտի առաջին գծում[3]։ Այս ամենից զատ Արրիանոսը հաղորդում է նաև մեկ ուրիշ կարևոր տեղեկություն։ Ըստ նրա, ճակատամարտին մասնակցած հայկական զորքերի առաջնորդներն էին Օրոնտեսը և Միթրաուստեսը[4]։

Վկայակոչված այս տեղեկություններից բացահայտ երևում է, որ ինչպես Կուրտիոս Ռուփոսն ու Արրիանոսը, այնպես էլ Խորենացին հիմնական հարցում իրար ամենևին չեն հակասում։ Նրանք բոլորն էլ հաստատում են հայերի մասնակցությունը Ալեքսանդր Մակեդոնացու դեմ մղվող պայքարին, տվյալ դեպքում մասնակցությունը մ. թ. ա. 331 թ. Գավգամելայի հանրահայտ ճակատամարտին, չնայած ենթադրելի է նաև նրանց մասնակցությունը նախորդ ճակատամարտերին, հատկապես մ. թ. ա. 333 թ. Իսոսի ճակատամարտին։

Այսուհանդերձ, հայոց զորաբանակի առաջնորդի հարցում խիստ էական, անգամ հակասական թվացող տարբերություն է նկատվում մի կողմից Արրիանոսի, մյուս կողմից էլ Խորենացու ավանդած տեղեկությունների միջև, որը և դարձել է Խորենացու տեղեկությունը անտեսելու հիմնական պատճառ (ուրիշ պատճառ հայտնի չէ)։

Ինչպես տեսանք, Ալեքսանդր Մակեդոնացու դեմ մղված պատերազմում, ըստ Արրիանոսի, հայոց զորքերի առաջնորդներն են եղել Օրոնտեսն ու Միթրաուստեսը, իսկ ըստ Խորենացու՝ Վահեն, Հայկյան թագավորական հարստության վերջին գահակալը։

Այս տարբերությունը, սակայն, չպետք է դիտել իբրև հակասություն, քանի որ Վահեն նույն ինքը՝ Միթրաուստեսն է, երբ փորձում ենք ստուգաբանել հիշյալ անունները, նկատի ունենալով նաև, որ «նրանք» միևնույն իրադարձության մասնակիցներն են եղել։

Նախ՝ Վահեի մասին։ Վահե անունը, որից Լեոյի կարծիքով առաջացել է նաև Վահագն անունը[5], հայ ժողովրդի մոտ հնագույն ժամանակներում խորհրդանշել է կրակի, լույսի, արևի աստվածությունը։ Ավելին, Վահեի հետ կապված այս պաշտամունքը սովորույթի ուժով պահպանված է եղել անգամ հետագա դարերում՝ մինչև XX դարի սկզբները, հատկապես Վանի շրջակա գյուղերում։

Այսպես, օրինակ, ճանաչված ազգագրագետ, բանահավաք և հնագետ Երվանդ Լալայանը իր «Վասպուրական» աշխատության մեջ այդ առթիվ բերել է հետևյալ ուշագրավ փաստը։ Ըստ նրա, Վանի գյուղերում պահպանված գերազանցապես արևապաշտական այդ ծեսը կատարվում էր պսակադրության ժամանակ՝ պսակի օրվա հետևյալ առավոտյան։ Նորահարսին և փեսային վաղ առավոտյան՝ արևը չծագած, հանել են տան կտուրը, կամ մի բարձր տեղ, որտեղից լավ երևում էր արեգակի ծագումը, երեսները դարձրել դեպի արևելք, իսկ հանդիսականները երգել են.

---

3 Арриан, Поход Александра, М.—Л., 1962, էջ 113։

4 Նույն տեղում, էջ 110։

5 Լեո, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1966, էջ 269։

էգ (այգ), բարև, ա՛յ էգ, բարև,	էգ, բարև, ա՛յ էգ, բարև,
էգն արևուն տանմ բարև,	էգն արևուն տանմ բարև,
Տա բազավորին շատ արև,	Տա բազուհուն շատ արև,
Վահե՛, Վահե՛:	Վահե՛, Վահե՛[6]:

Ինչպես երևում է երգի բովանդակությունից, Վահե անվան կրկնությունը՝ «Վահե, Վահե», հավասարազոր է «արև, արև» արտահայտությանը. հավանական է, որ այդ անունը հայ իրականության մեջ խորհրդանշել է լույսի, կրակի, արևի աստվածությունը՝ հատկապես հեթանոսության ժամանակաշրջանում։

Սույն եզրակացությունը հաստատող ապացույց է այն, որ Վահեի անունով սրբավայր է եղել պատմական Հայաստանում՝ Տարոն գավառի Աշտիշատ ավանում։ Ագաթանգեղոսը, նկարագրելով Գրիգոր Լուսավորչի վերադարձը Կեսարիայից, այս առթիվ գրում է. «Եւ իբրև եկն եհաս ի սահմանս Հայոց լուաւ Գրիգորիոս, թէ Վահէվանեան (նաև՝ Վահէվահեան—Լ. Շ.) մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոսկւով և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ. ութերորդ պաշտօն հրոչակաւոր, անուանեալն Վիշապաքաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի Մեծի լերինն Տաւրոսի, որ և անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ։ Զի յայնժամ դեռ ևս շէն կային երեք բագինք ի նմա. առաջին՝ մեհեանն Վահէվանեան (մի շարք ձեռագրերում՝ Վահէվահեան— Լ. Շ.), երկրորդն՝ Ոսկեմօր Ոսկեծին դից, և բագինն իսկ յայս անուն անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր դից. և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, Սենեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Աֆրոդիտէս»[7]։

Վահեվանյան կամ, որն ավելի հավանական է, Վահեվահյան կոչված այս տաճարը, որը հայտնի է որպես Վահագնին նվիրված սրբավայր, անկասկածելիորեն նաև լույսի, կրակի, արևի պաշտամունքի սրբավայր է եղել, քանի որ, ինչպես հայտնի է, Վահագնը նաև արևի պաշտամունքի մարմնացումն էր[8]։ Այս բանը ավելի քան ենթադրելի է Վահեի համար, որովհետև Վահեն նույնպես մարմնավորել է արևի պաշտամունքը և բացի այդ հեթանոսական այդ տաճարը հենց նրա անունով է կոչվել՝ Վահեվահյան (Վահէ+ վահէ+ եան= Վահէվահեան)։

Ստուգաբանորեն նույն իմաստն է ունեցել նաև Միթրան պարսից իրականության մեջ (հունական արտասանությամբ՝ Միթրաուատես), որը մարական և պարսկական հեթանոսական կրոնի ազդեցությամբ մուտք է գործել Հայաստան՝ Միհր անունով։ Ի դեպ, ինչպես Միթրան Պարսկաստանում, այնպես էլ

---

6 Ե. Լալայան, Վոսպուրական, Թիֆլիս, 1911, էջ 43—44, հմմտ. Լեո, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1966, էջ 269։

7 Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909, էջ 421—422։

8 Տե՛ս Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 85—86։ Ա. Գ. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատ. Ա., Երևան, 1959, էջ 61—64։ Լեո, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 269—270։

Միհրը Հայաստանում՝ որպես լույսի, կրակի և արևի աստվածություն[9], այնքան մեծ տարածում և ճանաչում են ունեցել, այնքան հանրահայտ են, որ այդ առթիվ ավելորդ է անգամ փաստեր վկայակոչելը[10]։

Այս ամենից հետևում է, որ Վահեն ստուգաբանորեն, իրոք, Միթրա-Միթրաուստեսն է, որ հավանական է, Վահեին պարսիկները, որոնց զորաբանակի կազմում նա կռվում էր, կոչել են այդ անվան իմաստային տարբերակով՝ Միթրա և այն Միթրա, Միթրես, Միթրաուստես ձևով անցել է հույներին[11]։

Իսկ նույն անվան հանդես գալը թարգմանաբար բավականաչափ ընդունված է եղել անցյալում (և ոչ միայն անցյալում)։ Օրինակ, մ. թ. II դարի պարսից Արշակունի գահակալներից մեկը Պարսկաստանում կոչվել է Պերոզ՝ նշանակում է հաղթող, իսկ հռոմեացիները նրան կոչել են Վոլոգեսոս, որը նույնպես նշանակում է հաղթող (տե՛ս Խորենացի, Բ, գլ. ԿԴ)։ Կամ՝ XVII դարի նորջուղայեցի նկարիչ Աստվածատուր Սուլթանյանը ռուսական արքունիքում (Միխայիլ Ռոմանովի ժամանակ) հայտնի էր Բոգդան Սալտանով անվան տակ։ Կարելի է բերել այս բնույթի նաև ուրիշ օրինակներ, սակայն սա էլ բավական է համոզվելու համար, որ Վահե անվան իմաստային տարբերակը՝ Միթրա-Միթրաուստես, ամենևին էլ եզակի երևույթ չէ։

Ավելին, Արրիանոսի հիշատակած հայոց զորքերի առաջնորդի այս անունը՝ Μιθραύστης, ստուգաբանորեն ունի նաև այլ տարբերակ, որի վրա արժե ավելի լուրջ ուշադրություն դարձնել։ Այսպես, գերմանացի հայտնի իրանագետ Ֆերդինանդ Յուստին իր „Iranisches Namenbuch“ աշխատության մեջ անդրադառնալով Գավգամելայի ճակատամարտում հայերի առաջնորդ Միթրաուստեսին (Μιθραύστης), հայտնում է, որ Արրիանոսի հիշատակած այդ անունը հին պարսկերենի Miprawahišta-ն է, ավելի ճիշտ, Miprawahišta ա ն վան մի տարբերակը (տե՛ս էջ 216բ—217ա)։ Այս ստուգաբանությանը հետևելով, նույն ձևով է բացատրում Միթրաուստես անունը նաև Հր. Աճառյանը «Հայոց անձնանունների բառարանում» (հատ. Գ, էջ 333)։

Ծանոթանալով այս ստուգաբանություններին, ակադ. Ս. Տ. Երեմյանը եզրակացրել է, որ հայերեն այն պիտի հնչեր «Միհրվահիշտ» ձևով և այդպես արտահայտել է «Հայ ժողովրդի պատմության» դասագրքում (1951, Ա մաս, էջ 40, 1958, Ա մաս, էջ 41)։ Ի վերջո, Արրիանոսի հիշատակած Միթրաուստես անունը Միհրվահիշտ տարբերակով օգտագործել են նաև պատմական գիտությունների դոկտոր Գ. Սարգսյանը և պատմական գիտությունների թեկնածու Գ. Տիրացյանը «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի առանձին հատորում[12]։

---

9 Միթրան կամ Միհրը ոչ միայն արևի, լույսի ու կրակի աստվածն էր, այլև վիշապամարտ և դիվահալած աստված, որի հետ էր կապվում չարի ձեռքից մարդկության հետագա փրկության հույսը (տե՛ս Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 34)։

10 Տե՛ս Թ. Ավդալբեգյան, Միհրը հայոց մեջ (Հայագիտական հետազոտություններ, էջ 13—80)։ Ա. Գ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 64—67։

11 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1945, էջ 331—332։

12 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն» (ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. 1, Երևան, 1971, էջ 494 և 506։

Արդ, եթե Միթրաուստես անունը իմաստով էր նույնանում Վահե անվան հետ, այժմ արդեն այդ նույնությունը առավել ակնհայտ է, քանի որ Միհրվահիշտր իր մեջ ներառնում է Վահե անվան արմատը, և բացի այդ, այն Վահե անվան իմաստային երկու տարբերակների համատեղ արտահայտությունն է։

Այսպիսով, մի կողմից Վահե և Միթրաուստես կամ Միհրվահիշտ անունների իմաստային նույնությունը, մյուս կողմից էլ այն, որ նրանք հիշատակված են պատմական նույն ժամանակաշրջանում ու նույն դեպքի առիթով կամ՝ ժամանակագրորեն իրարից ոչ հեռու դեպքերի առիթով, հիմք են տալիս պնդելու, որ, իրոք, Խորենացու հիշատակած Վահեն Արրիանոսի մոտ հիշատակված Միթրաուստեսը կամ Միհրվահիշտն է։

Ինչ վերաբերում է հայկական զորաբանակի մյուս առաջնորդին՝ Օրոնտեսին կամ Երվանդին, որին Արրիանոսը հիշատակել է, իսկ Խորենացին՝ ոչ, պետք է դիտել որպես թերասացություն Խորենացու կողմից, քանի որ նա իր երկը շարադրելիս հիմնական ուշադրությունը դարձրել է գլխավոր դեմքերի ու դեպքերի վրա։ Շատ հնարավոր է նաև, որ Խորենացու օգտագործած ըստկրզբնաղբյուրում (իսկ դա Մարաբասյան մատյանն է) չի եղել մյուս առաջնորդի անունը, որին մեկ ուրիշ աղբյուրից ծանոթ է Արրիանոսը, և դրանով նա ոչ թե հակասում, այլ լրացնում է Խորենացու տեղեկության թերին։

Հարցի այսօրինակ լուսաբանումը և օտարաբան աղբյուրների ու Խորենացու վերը բերված տեղեկության համադրումը ունի պատմագիտական շատ կարևոր նշանակություն։

Առաջին, հաստատվում է Վահեի պատմական գոյությունը, որպես Հայկյան թագավորական հարստության վերջին գահակալ։ Դրանով իսկ մեկ անգամ ևս հաստատվում է նաև Մարաբասյան մատյանի ավանդած տեղեկությունների արժանահավատությունը, որը հիմնականում ներկայացվում է որպես ոչ արժանահավատ, լավագույն դեպքում որպես առասպելական պատմությունների հավաքածու։

Երկրորդ, առավել ամբողջական և հստակ են դառնում մեր պատկերացումները ոչ միայն Մակեդոնացու դեմ կռվող հայկական զորաբանակի կազմի և ճակատամարտում ունեցած դերի, այլ նաև այդ զորաբանակի առաջնորդների մասին, որը իրարամերժ կարծիքների տեղիք է տվել։ Այժմ արդեն պարզվում է, որ Գավգամելայի ճակատամարտին մասնակցած հայկական՝ եթե ոչ ամբողջ զորաբանակի, ապա գոնե Մեծ Հայքի զորաբանակի առաջնորդը եղել է (կամ կլիներ, եթե անգամ նկատի ունենանք, որ Խորենացու խոսքը Գավգամելայի ճակատամարտի մասին չէ) Միթրաուստեսը կամ Միհրվահիշտը, քանի որ, ինչպես տեսանք, սա Վահեն է, իսկ վերջինս, ըստ Խորենացու, Մակեդոնացու արշավանքների ժամանակ համայն հայոց թագավորն է եղել։

Երրորդ, ելնելով վերոհիշյալ փաստերից, պետք է վերանայել պատմագիտության մեջ ճանաչում գտած այն կարծիքը, որի համաձայն Օրոնտեսը կամ Երվանդը համարվում է Մեծ Հայքի թագավոր, իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքի[13]։ Իրականում, ինչպես տեսնում ենք, բոլորովին ուրիշ պատկեր է՝

[13] Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, էջ 91—99։ «Հայ ժողովրդի պատմություն» (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), հատ. I, էջ 503—508։

Օրոնտեսին ոչ թե Մեծ Հայքի, այլ Փոքր Հայքի կուսակալ կամ, լավագույն դեպքում, թագավոր պետք է համարել։ Ասում ենք լավագույն դեպքում, եթե հետևելու լինենք Կուրտիոս Ռուփոսի տեղեկությանը՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի զորաբանակների մասին, իսկ եթե ընդունենք Արրիանոսին և Խորենացուն, որոնք հայոց մեկ զորաբանակ են հիշում, Օրոնտեսին պետք է համարել Վահե-Միթրաուստեսին (Միհրվահիշտին) ենթակա կուսակալ և առաջնորդ, որը ավելի հավանական է։

Այս ամենից զատ սկզբնաղբյուրների ուշադիր քննությունից երևում է նաև, որ հիշյալ կարծիքը սոսկ ենթադրություն է և ոչնչով հիմնավորված չէ։ Օրինակ, Արրիանոսը, որը, կարելի է ասել, միակ սկզբնաղբյուրն է այդ հարցում, նշել է միայն, որ Գավգամելայում հայոց զորքերի առաջնորդներն էին Օրոնտեսը և Միթրաուստեսը։ Իսկ թե դրանցից ո՞րն էր Մեծ Հայքինը, կամ ո՞րը՝ Փոքր Հայքինը, նա ոչինչ չի ավանդում։ Հետևաբար միայն Արրիանոսի տեղեկություններով այս հարցին որոշակի պատասխան տալ հնարավոր չէ։

Ի դեպ, Արիանոսի մոտ Փոքր Հայքի և Մեծ Հայքի զորաբանակները չեն հիշատակված առանձին-առանձին, ինչպես Ռուփոսի մոտ է, այլ հիշատակված է հայկական մեկ ընդհանուր զորաբանակ, որը կռվել է պարսից բանակի աջ թևում։ Խոսք չկա նաև պարսից բանակի ձախ թևում կռվող հայկական զորքի մասին, չնայած երկու առաջնորդների հիշատակությունը Արրիանոսի մոտ (Օրոնտեսի և Միթրաուստեսի) ենթադրել է տալիս հայկական երկու զորաբանակների մասնակցությունը Գավգամելայի ճակատամարտին[14]։

Ինչ վերաբերում է Դիոդոր Սիկիլիացու և Պոլիենոսի տեղեկություններին, որոնք մոտ 317 թ. (մ. թ. ա.) հիշատակել են բուն Հայաստանի սատրապ Օրոնտեսին[15], դրանք չեն կարող փոխել մեր համոզումը։ Անհավանական չէ, որ Փոքր Հայքի կուսակալ Օրոնտեսը, որը Գավգամելայի ճակատամարտում պարսից կողմից պայքարում էր Ալեքսանդր Մակեդոնացու դեմ, ճակատամարտից հետո, երբ արդեն Վահե-Միթրաուստես-Միհրվահիշտը սպանված էր, հենց իր՝ Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նշանակվեր ամբողջ Հայաստանի սատրապ։

Այս ենթադրությունը անհավանական չէ, եթե նկատի ունենանք Ալեքսանդր Մակեդոնացու վարած սիրաշահելու քաղաքականությունը Արևելքում, հատկապես Աքեմենյաններին ենթակա գահակալների նկատմամբ։ Սկզբնաղբյուրներում բազմաթիվ փաստեր կան այն մասին, որ նա վերահաստատել է իրենց իշխանություններում կամ նոր պաշտոնների ու պատիվների արժանացրել անգամ նրանց, որոնք ակամա իր դեմ էին, սակայն հետո ընդունեցին նրա իշխանությունը։

Ամփոփենք. Հայկյան հարստության վերջին գահակալ Վահեն Արրիանոսի հիշատակած Միթրաուստեսն է, մինչև Գավգամելայի ճակատամարտը ոչ թե Օրոնտեսը, այլ նա է եղել համայն հայոց կամ Մեծ Հայքի թագավորը, իսկ Օրոնտեսը՝ Փոքր Հայքի կուսակալ կամ թագավոր, որը, հավանական է, ճակատամարտից հետո Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նշանակվել է սատրապ ամբողջ Հայաստանի վրա։

---

14 Квинт Курций Руф. История Александра Македонского, էջ 23, 115.. Սմմտ. Арриан, Поход Александра, էջ 110, 112—113։

15 Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 96—97։ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), էջ 504—505։

О ВАГЭ, УПОМИНАЕМОМ В «ИСТОРИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

Л. П. ШАГИНЯН

(Резюме)

На основании сохранившихся в первоисточниках данных в статье сделана попытка доказать, что упомянутый Мовсесом Хоренаци последний царь из династии Гайкидов Вагэ является тем самым предводителем армянских войск в битве при Гавгамеле Митраустом, о котором свидетельствует Арриан. Исходя из этого можно полагать, что до битвы при Гавгамеле царем Великой Армении был Вагэ-Митрауст, а другой командующий армянскими войсками Оронт—наместником или царем Малой Армении. Вероятным можно считать также то, что после битвы, когда уже был убит Вагэ-Митрауст, Оронт был назначен Александром Македонским сатрапом всей Армении.